ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԶԳՏՈՒՄՆԵՐԸ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսի 1992 Հոկտեմբեր 26 թուակիր հեռագիր-նամակը, Վատիկանի Արեւելեան Հռոմէադաւան Եկեղեցեաց Միութեան Նախագահ՝ Գերշ. Կարտինալ Աշիլ Սիլվէսթրինիի.-

Ձերդ Գերազանցութիւն
Կարտինալ Ա. Սիլվէսթրինի
Հռոմ, Վատիկան

Եղբայրական սիրով ստացանք Ձեր շնորհաւորական հեռագիրը և Ձեր բարի մաղթանքները ուղղուած մեր Առաքելական Մայր Եկեղեցիին և մեր համեստ անձին:

Ցաւօք սրտի Ձեր հեռագիրը զուգադիպեց մի փաստաթուղթի, որ վերջերս մեր ձեռքը հասաւ, որ կոչւում է „վերադարձ Հայաստան" enciclique 7 Յունիս 1992 թուակիր Յովհաննէս Պետրոս կաթոլիկ հայոց Պատրիարքի ստորագրութիւնը կրող՝ հրապարակուած Պէյրութ, որով յայտարարւում է ի լուր աշխարհի թէ Հայ Առաքելական Եկեղեցին վաւերական քրիստոնեական եկեղեցի չէ, այլ մի տեսակ hérétique եկեղեցի calcedoni-ի ժողովի հետևանքով:

Մենք այս արարքը գտնում ենք բոլորովին հակա էկումենիկ դիրքաւորում և ամբողջապէս թշնամական մեր Սուրբ Եկեղեցու նկատմամբ:

Այս անսպասելի հրատարակութեան հետևանքով, հայ կաթոլիկ եկեղեցու ներկայութիւնը Հայաստանում մենք գտնում ենք անցանկալի և մերժելի:

Այսօր Մայր Աթոռում տեղի ունեցած եպիսկոպոսական ժողովին մեր նախագահութեամբ, որին մասնակցեցին Հայաստանի և արտասահմանից 18 եպիսկոպոսներ ի գլուխ ունենալով Երուսաղէմի հայոց Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս և Կ. Պոլսոյ Պատրիարքութեան ներկայացուցիչ Մեսրոպ եպիսկոպոս , իրենց վրդովմունքը յայտնեցին Յովհաննէս Պետրոս հայ կաթոլիկ Պատրիարքի վերոյիշեալ գրութեան նկատմամբ և որոշեցին անհրաժեշտ միջոցառումներով պաշտպանել Հայ Առաքելական Եկեղեցւոյ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հեղինակութիւնը և արժանապատուութիւնը հայ հաւատացեալ ժողովուրդի ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վազգէն Ա.

Վազգէն Ա
Կաթողիկոս Հայոց

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

digitised by A.R.A.R.@